Արձանագրություն N 2

«ՀՀ ԷՆ-ՇՀԾՁԲ-15/3-16-08» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ)

ք. Երևան 11 ապրիլի 2016թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի

նախագահ՝ Կ.Մակարյան

քարտուղար՝ Վ.Պապիկյան

անդամներ՝ Ա.Մկրտչյան, Ա.Բաբայան, Գ.Սիմոնյան, Գ.Մելիքսեթյան,

1. ՇՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա.Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակվել է <gnumner.am> կայքի շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգ հայտարարություններ բաժնում, ինչպես նաև <www.armeps.am> էլեկտրոնային կայքում:

բ.գնային առաջարկները բացվել են 2016 թվականի ապրիլի 11-ին՝ ժամը 10:30-ին <www.armeps.am> էլեկտրոնային կայքի միջոցով:

գ.<www.armeps.am> էլեկտրոնային կայքով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«Գարանտսերվիս»ՍՊԸ	ք.Երևան, Թբիլիսյան խճ. 20, հեռ. 010-28-54-47

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

2.1 Միակ մասնակից «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտը կազմվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 , դեմ-0

5. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

Մասնակցի գնային առաջարկը հետևյալն է

Հ/Հ չափաբաժին	Բյուջեով նախատեսված գինը /ՀՀ դրամ/	Ծառայության անվանումը	Մասնակցի անվանումը և առաջարկած գինը /ՀՀ դրամ/
			«Գարանսերվիս» ՍՊԸ
			Առանց ԱԱՀ-ի
1	400 000	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	2 053 567
2		Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	5 194 950

6. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

6.1 Հիմք ընդունելով միակ մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկը՝ հանձնաժողովը որոշեց՝

ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել միակ հայտ ներկայացրած **«Գարանսերվիս» ՍՊԸ-ին**:

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստին ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով հարցում է ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից կպահանջվի համապատասխան որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին

կտրամադրվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

7. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

8. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ</u>

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ք.Երևան,Մ.Մկրտչյան 5, 910 սենյակ հասցեում, սույն արձանագրության 6-րդ կետի 6.2 կետով սահմանված փաստաթղթերի ներկայացման ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Կ.Մակարյան

քարտուղար՝ _____ Վ.Պապիկյան

անդամներ՝ _____ Ա.Մկրտչյան

_____ Գ.Սիմոնյան

_____ Ա.Բաբայան

_____ Գ.Մելիքսեթյան